ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. հուլիսի 7 -ին, N 252-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԵՐԱԶԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և ՀՀ Արագածոտնի մարզի «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ե. Մեսրոպյանի 2023 թվականի հուլիսի 6-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Երազիկ Մեսրոպյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2022-2023 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2023 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 11-ը ներառյալ:
2. Երազիկ Մեսրոպյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Աննա Տերտերյանի վրա:

3. Երազիկ Մեսրոպյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 14-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 7/7/2023 16:55:03 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ